

նւոյն յաղթելու համար առիւծին ուժը բաւական չէ . հապա իր խորամանկութիւնն ու արագութիւնն ալ շատ կ'օգնէ : Ուստի ուրիշ տեսնողներ կ'ըսեն թէ ասանկ ատեն առիւծը յանկարծ կ'իյնայ որսին վրայ , ու ճանկերը բոլոր ուժովը կենդանւոյն քթին ու բերնին մէջ կը խոթէ . և ինչուան որ ան խեղճը կուռիւ ուզէ՝ կը խղդուի կ'իյնայ :

Մփրիկէի հիւսիսային կողմը բնակող սևերը խիստ վարպետ են առիւծի հետ կուռելու՝ սովորաբար ձիով : Արբոր կը տեսնէ առիւծն որ մարդը յաղթեց իրեն , այնպէս ուժը կը կտրի կը թուլնայ որ անոր ձայնէն կը դողայ : Իսկ ընտանեցած առիւծը ինչուան այծու հետ կը վարուի՝ կ'ուտէ կը խմէ , և ուրիշ ընտանի կենդանեաց հետ մէկտեղ կը խաղայ կը ցատքըտէ : Ինուութեամբ այնպէս մեծսիրտ է որ իրմէ տկար կենդանիներուն ըրածին շատ անգամ կ'ընեն : Առիւծի առջև անգամ մը չնիկ մը ձգեր են որ ուտէ . բայց անիկայ չէ թէ միայն փնաս մը չէ տուած անոր , հապա նաև յայտնի գութ ցըցուցեր է վրան : Շատ անգամ երբոր միս կ'ընեն եղեր առիւծին , չնիկը կը սկսէր կ'ըսեն հաջել առիւծին դէմ որ չըլլայ թէ անիկայ ուտէ . իսկ առիւծը թագաւորի պէս թող կուտար որ հանգիստ ուտէ :

Վարողչաց կարգէն մէկը գերի ընկած ըլլալով Սարոքի թագաւորին քովը , և ազատելու յոյս չունենալով , խօսքը մէկ կ'ընէ ուրիշի մը հետ ու կը ձգեն կը փախչին : Վիշերները ճամբայ կ'ընեն , ցորեկը ծաւերուն վրայ կամ աւազին մէջ կը պահուրտին եղեր : Արկու որ սաստիկ ծարաւ քաշելէն ետքը յանկարծ գիշեր մը լճի մը քով կը գտնուին . մէկէն իյնանք խմենք ըսէնուն չմնար , տեսնեն որ սոսկալի առիւծ մը կեցեր է լճին եզերքը , թող չտար որ մօտենան : Ինչ ընեն աս խեղճերը . խորհուրդ կ'ընեն որ գազանին ոտքը իյնան՝ աղաչելու ձայներ հանեն որ գութ շարժեն զին-

քը : Առիւծը աս բանս տեսնելուն պէս կը քաշուի մէկդի կը կենայ , ու անոյշ աչքով իրենց կընայի , կը թողու որ ջրերնին խմեն ու ելլեն երթան : Արենայ թէ աս առիւծը անօթի կամ ծարաւ ալ չէ եղեր որ այնպէս շուտով համոզուեր է :

Շատ դիպուածներու մէջ փորձուած է աս կենդանւոյն երախտագիտութիւնը :

Աղեր է որ տասը տարիէն ետև ժողովրդեան մէջ իր տէրը ճաննալով սկսեր է ուրախութենէն ցատքըտել , մռնչել ու ամէն կերպով ցուցնել իր կարօտը ու սէրը :

Սարդուն մէկը ճամբան հիւանդ առիւծ մը կը գտնէ՝ որ թագաւորական վանդակէ մը հաներ դուրս ձգեր են եղեր . երբոր գեղ կ'ընէ կ'ընտցընէ , նորէն առջի վանդակը կը տանին . բայց առիւծը անկէ ետքը զինքը ընտցընող բարերարին ձեռքէն միայն կ'ուզէ եղեր կերակուր առնել :

Բայց զարմանալին աս է որ աս վեհ անձն գազանը շատ անգամ թող կուտայ որ իր պահապանը հետը խաղայ , լեզուն քաշէ , զարնէ ծեծէ , և այլն . թէպէտ քանի մը անգամ ալ իր վրէժը առած է :

Ընտրա քաղաքը Մփրիկէէն բերած երկու առիւծ կան եղեր ատենով , որ պղտիկուց հոն մեծնալով պահապանին հետ խիստ ընտանեցեր են եղեր : Արբոր պահապանը անկէ ելեր է , քիչ ատեն կ'անցնի՝ անոնց մէկը ցաւէն կը սատկի :

Չնեւոն Բազմութիւնը :

Չնեւոն համրանքը խելքէ դուրս բան մը կ'ըլլար՝ թէ որ իրենց զանազան թշնամիները անդադար ետև չըլլային անոնց հաւկիթները ջարդելու : Չուկ կայ որ հազիւ կէս լիպրէ կը կռուէ , և սակայն հարիւր հազար հաւկիթ կ'ուսնենայ փորը : Սուրի-

նէս կամ Բերքն ըսուած ձուկը հարիւր տասնութինը լիպրէ հաւկիթ կրնայ ունենալ, որ ըսել է գրեթէ 7,653,000 հաւկիթ¹ : Ի վնէնհոք անուանի բընախօսը՝ ընկա կամ Բեդփ ըսուած ձկանը փորը ինը միլիոն հաւկիթ համարեր է : Հաշիւ մը ըրեր են որ եթէ ընկա ձկան ամէն ունեցած հաւկիթները ձուկ դառնային, միայն ութը տարուան մէջ ահագին Սկիանոսին ընդարձակութեան երեսը ընկայով կը լեցուէր :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Բարակ² շինելու հերպը :

ԲԱՐԱԿԱՆ, որ վառօդ՝ ժանտաջուր ու արհեստական կրակներ³ շինելու, և ոսկի արծաթ զտելու կը գործածուի, կէս աղէ՝ որ բորակային թթուութեամբ ու փոթասով կը շինուի : Օ ուտ բորակը ճերմակ, մաքուր ու դիւրաբեկ է, և օդին մէջէն խոնաւութի չծրծեր :

Բնութեան մէջ խառն բորակաւոր հող շատ կը գտնուի, բայց զուտը խիստ քիչ անգամ. բոյսերէն ոմանց մէջ ալ բորակ կը գտնուի, ինչպէս է ծխախոտը. և ան պատերուն վրայ ալ որ անձրեւ չեն ուտեր, մանաւանդ գետնափոր տեղերու պատերուն երեսը բորակային աղ կը կապէ. ասիկայ ժողովելու համար նախ զգուշութեամբ քերելու է, յետոյ մոխրաջրով լուալով զտելու է : Բայց շատ անգամ բորակը արհեստով կը շինեն, ջանալով որ որչափ կարելի է բնական բորակին նմանցընեն : — Պէրկմանին ըսածին նայելով, 100 մաս բիւրեղացած բորակի կտորին 49 մասը ալքալի է, 33

մասը բորակային թթուութեամբ, և 18 մասը ջուր. իսկ Վիրվան կ'ըսէ թէ 63 մասը ալքալի է, 30 մասը թթուութեամբ, 7 մասը ջուր :

Բորհեստական բորակ շինելու համար պէտք է նախ ընտրես այնպիսի նիւթեր որ ուրիշ մարմնոց անկենդան ըսուած կազին հետ սաստիկ ձգողութիւն ունենալով ան կազին հետ դիւրաւ միանան : Եւ յատկութիւնս ունին ան հողերը, որոնց մէջ թէ բուսոց և թէ կենդանեաց փտութիւններ կը գտնուին. ինչպէս են հին այրերու մէջ եղած հողերը, ճախճախուտ հողերը, սապոն շինելէն ետքը մնացած մոխիրը, փողոցներու շաղախը, մէզը, մոխիրը, կիրը, և այլն :

Եւ նիւթերս անանկ ժողովելու ու դիզելու է որ օդը ան դիզուածքին ամէն կողմէն բանի. անոր համար իրեն աւելի լայն կողմը դէպ'ի հարաւային արեւելեան ու հիւսիսային արեւմտեան դին դարձած պիտի ըլլայ, վրան ալ որչափ կարելի է լայն : Եւ բլուրներուն բարձրութիւնն ալ տարածութեանը համեմատ պիտի ըլլայ, բայց 10 ոտնաչափէն բարձր պէտք չէ ելլել. մէյմը որ գետնին երեսէն տասը ոտք վեր եղած հովը աւելի չոր ըլլալով ուժով կ'ազդէ անոնց վրայ, մէյմըն ալ որ խոնաւութիւնը միշտ վարերը կ'իջնայ : Եւ բլուրներուն վրայ ծածք մը պէտք է շինել որ պահպանէ զանոնք անձրեւէն ու արեւէն, որ շատ փնասակար են :

Իսկ թէ աս բլրակները շինելու համար՝ աս կամ ան նիւթէն որչափ խառնելու է ըսես նէ, գիտնաս որ ասոր մասնաւոր որոշուած չափ մը չկայ. ընդհանուր գործածականը աս է .

96 կամ 6 տակառ հող .

16 կամ 1 տակառ չմարած կիր .

128 կամ 8 տակառ կենդանեաց կի՛ բուսոց փտած աղը .

50 կամ 3 տակառ աղբաջրով թրթած մոխիր :

1 Աս հաւկիթներուն ետքը հատը մէկ ցորենաչափ ծանրութիւն ունին :

2 Իտ. Nitro. ՏՄ. Իւ-Բելլէ :

3 Ֆիւլէ :

1 Գղ. Azote.